

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ «ՄԵՏԱՑԻՉԻԿԱՅԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԿՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԻԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Հ. ՄԻՐՁՈՑԱՆ

Սկսած Մեսրոպ Մաշտոցից՝ տարբեր ժողովուրդների լեզուներից հայերենի են թարգմանվել տարարևույթ բազմաթիվ գործեր, որոնցից շատերն այսօր ունեն ոչ միայն ազգային, այլև համաշխարհային բացառիկ նշանակություն: Այդ թարգմանությունների մի մասն ավելի հին լինելով, քան նրանց պահպանված բնագրերը, մեծապես օգնում է վերջիններիս սկզբնական պատկերը վերականգնելուն, իսկ մի մասն էլ, պահպանված լինելով միայն հայերեն, ձեռք է բերում բնագրի արժեք¹: Այդ է պատճառը, որ հայ թարգմանական գրականության ուսումնասիրության հարցերը վաղուց ի վեր գտնվել են և այսօր էլ շարունակում են մնալ հայ և օտարազգի հայագետներից շատերի ուշադրության կենտրոնում²: Բայց եթե մինչև այժմ համեմատաբար լավ է ուսումնասիրված նախորդ դարերի, մասնավորապես V—VIII և X—XIV դդ. թարգմանական գրականությունը³, ապա նույնը չենք կարող ասել XVII դ. կատարված հայերեն թարգմանությունների մասին, չհաշված առանձին բացա-

* Ներկա հոդվածի համար հիմք է ծառայել 1981 թ. սեպտեմբերին Վրացական ՍՍՀ Սալկա շրջկենտրոնում կայացած «Արիստոտելյան ընթերցումներ» համամիութենական երկրորդ գիտաժողովում մեր կարգացած զեկուցումը:

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս «Հայ հնագույն թարգմանությունների մատենաշարի» համար 1. Տեր-Պետրոսյանի գրած «Հայ թարգմանական գրականության ընդհանուր բնութագրեր» ներածությունը (էջ 11—26) անտիպ աշխատությունը: Օգտվելով առիթից՝ մեր շնորհակալությունն ենք հայտնում հեղինակին՝ ձեռագիրը սիրով մեզ տրամադրելու համար:

² Մանրամասն տե՛ս նույն տեղում:

³ Ճիշտ է, առայժմ հրատարակի վրա չկա այդ դարերի հայ թարգմանական գրականության պատմության բազմակողմանի ուսումնասիրությանը նվիրված ամբողջական աշխատանք, բայց և այնպես կատարված է մեծ գործ: Տե՛ս, օրինակ, Գ. Զարբանեայան, Մատենադարան հայկական թարգմանութենաց նախնեաց (դար Գ-ԺԳ), Վենետիկ, 1889, Ե. Ալիբեյան, Գասական հայերենը և վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, Եույնի Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերենէ, Վիեննա, 1951, Հ. Մանանդյան, Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, Հ. Անադյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, հ. Բ, Երևան, 1976, Լ. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայրենի բերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, Լ. Խաչիկյան, Արտագի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը, «Բանբեր մատենադարանի», № 11, Երևան, 1973, Եսյնի Քոնայի հոգևոր մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը, Յովհաննէս Քոնեցի, Յաղագս Քերականին, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի և Ս. Ավագյանի (Երևան, 1977) գրքում, С. Арешатян, Формирование философской науки в Древней Армении (V—VI в.в.), Ереван, 1973, Եսյնի. К истории философских школ в средневековой Армении, Ереван, 1980, և այլն:

ուություններ⁴: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XVII դ. հայ գիտամշակութային կյանքի ընդհանուր վերելքի հետ միասին բուռն ծաղկում է ապրել նաև թարգմանական գրականությունը: Նախորդ դարերի նման XVII դ. ևս հայ մատենագրության անխոնջ մշակներից շատերի ջանքերով հայերենի են թարգմանվել ինչպես անցյալի, այնպես էլ իրենց ժամանակի գիտական, փիլիսոփայական, գեղարվեստական ու կրոնական գրականության մի շարք կոթողներ, որոնք գալիս էին հարստացնելու հայ բազմադարյան մատենագրությունը, խթանելու տեսական մտքի զարգացումը: Այդ դարը նույնպես հայ մատենագրությանը տվել է բարձրարվեստ թարգմանության գրուպործոցներ՝ հայ թարգմանիչների անվանացանկը հարստացնելով պրոֆեսիոնալ թարգմանիչների նոր անուններով: Անշուշտ, շատերն են զբաղվել զանազան գործերի թարգմանությամբ, բայց հայ մշակույթին բերած իրենց մեծ նըպաստով հատկապես առանձնանում են Հովհաննես Անկյուրացին, Ստեփանոս Լեհացին, Ոսկան Երևանցին և Հովհաննես Հոլովը: Ասենք նաև, որ եթե հայ թարգմանական գրականության նախորդ շրջաններում, նայած պատմական կոնկրետ պայմաններին ու հանգամանքներին, թարգմանություններ են կատարվել հունարենից, ասորերենից, արաբերենից, վրացերենից, լատիներենից և այլ լեզուներից, ապա XVII դ. քանի որ միջազգային տիրապետող լեզուն դեռ մնում էր լատիներենը, հայերեն թարգմանություններ են կատարվել գերագանցապես լատիներենից, իսկ առանձին դեպքերում՝ լեհերենից և ուրիշ լեզուներից:

XVII դ. հայ թարգմանիչների շարքում ամենապատվավոր տեղը պատկանում է նշանավոր մտածող Ստեփանոս Լեհացուն, որը դեռ իր կենդանության ժամանակ վաստակել էր «քաջ հոռետորի», «սնհաղթ փիլիսոփայի», «ներհուն թարգմանիչ» համբավ: 1662 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Լեհացու աշակերտ ներսեսը⁵ խնդրում է հիշել իր ուսուցիչ՝ «գՍտեփանոս Իլովացի քաջ հոռետոր և թարգմանիչ Բարունին, որ էր այր լի շնորհօք և հանճարով և սրբեալ հոգով սրբով. զի հանապազ ըստ աստուածատուր պարգևօքն զամենայն եղբարս կատարելագործէր փիլիսոփայական կրթութեամբ»⁶: Ստեփանոս Լեհացու թարգմանչական գործունեության մասին

⁴ Օրինակ, «Հայելի վարուց» ժողովածուի հայերեն թարգմանության մասին տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Ա, Եր., 1979, Ն. Ակինյան, Ստեփանոս վարդապետ Լեհացի, «Հանդես ամսօրյա», 1912, № 1, Բ. Տեր-Գալքյան, «Հայելի վարուցի» հայերեն թարգմանության հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Արաբեր հասարակական գիտությունների», 1981, № 10:

⁵ Իմիջիայլոց, այս ներսեսը և 1675 թ. Գրիգոր Երևանցու արտագրած Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 10032 ձեռագրի պատվիրատու ներսես Բարունին նույն անձնավորությունն են, ուստի, մեր կարծիքով, անհավանական է Գ. Պետրոսյանի և Ա. Արբասամյանի այն ենթադրությունը, թե իբր ներսես Բարունին կարող է լինել «այն ներսես Երևանցին, որն Ուրբանյան դպրոցի աշակերտներից է եղել և գործուն մասնակցություն է ունեցել լեհահայերի գծություններին, իհարկե, հօգուտ պապական եկեղեցու» (տե՛ս «Երկրաշափութին Եզլիտին», Երևան, 1962, էջ ԺԴ):

⁶ Մատենադարան, ձեռ. № 110, էջ 466 բ—467 ա: Ի դեպ՝ 1662 թ. արտագրված այս ձեռագիրը Լեհացու թարգմանական գործերից բացի պարունակում է նաև նրա հեղինակած «Թանք իմաստասիրականք և աստուածաբանականք» բառարանը: Դա նշանակում է, որ վերջինս գրվել է առնվազն նույն թվականին կամ դրանից առաջ: Հարկ է նշել, որ այս հարցում հայագիտության մեջ կան էական տարակարծություններ: Օրինակ, հիմք ընդունելով Լեհացու «բառարանը պարունակող վաղագույն ձեռագրերի գրչագրության թվականները», Գ. Գրիգորյանը գտնում է, որ այն պետք է կազմված լինի XVII դ. 60-ական թթ. (Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական

նույնպիսի հիացական խոսքեր են գրել նաև Առաքել Դավրիժեցին⁷ և հետագա մատենագիրներից շատերը:

Յավոք, Ստեփանոս Լեհացու կյանքի ու գործունեության շատ էջեր դեռ կարոտ են մանրազնին ուսումնասիրության ու լուսաբանման: Նպատակ շունենալով ամենայն մանրամասնությունները դրանք ներկայացնելու այստեղ, ասենք միայն, որ Լեհացին ծնվել ու սկզբնական կրթությունն ստացել է Լվովում: Ըստ Դավրիժեցու՝ նա եղել է «յազատ և ի փարթամ տանէ, բարեպաշտ ծնողաց զավակ»: Ականատես լինելով տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչի ու կաթոլիկ միսիոներների կողմից լեհահայերի դավանափոխման ուղղությամբ գործադրվող բռնություններին, Լեհացու ծնողները կանխազգում են դրանց հետևանքները և իրենց որդուն կաթոլիկացման վտանգից դեռ չպահելու նպատակով ուղարկում են մայր հայրենիք: Այստեղ ընդունվում է էջմիածնի միաբանության անդամ և շուտով դառնում նրա նշանավոր դեմքերից մեկը: 1646 թ. էջմիածնում ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում Լեհացին իրեն անվանում է «կրօնաւոր», իսկ իր ծնողներին՝ «փոխեցելոցն ի Քրիստոս»⁸: 1652 թ. այդ նույն ձեռագիրը Լվովի սուրբ Աստվածածնի եկեղեցուն նվիրելիս Լեհացին արդեն իրեն կոչում է «վարդապետ»: 1673 թ. գրված մեկ այլ ձեռագրում նրա մասին ասվում է, որ էջմիածնի եկեղեցու գանձապահն է: Լեհացու ծննդյան և մահվան թվականների շուրջ հայագիտական գրականության մեջ արտահայտվել են իրարամերժ ու հակասական տեսակետներ⁹: Մատենագրական տվյալների համեմատությունից պարզվում է, որ Լեհացին մահացել է 1689 թ. խոր ծերության հասակում¹⁰:

Մինչև իր երկարատև կյանքի վերջը զբաղվելով գերազանցապես թարգմանչական գործունեությամբ¹¹, Լեհացին մայրենի լեզվով լայն ընթերցողի սեփականությունն է դարձրել համաշխարհային մշակույթի գրավոր բաղմամբիվ արժեքավոր հուշարձաններ: Դրանցից առանձնապես կարևոր են Հովսեփոս Փլավիտսի «Հրեական պատերազմը», «Պատճառաց գիրքը», «Հայելի

բառարանը, «Պատմա-բնասիրական հանդես», 1975, № 2, էջ 133), մինչդեռ Յու. Թարվերդյանը ելնելով Վլաս վարդապետի մի անորոշ տեղեկությունից, եզրակացնում է, որ այն «ստեղծվել է 1671 թ. կամ քիչ առաջ» (Յու. Թարվերդյան, Ստեփանոս Լեհացու փրիսոփայական հայացքները, Եր., 1979, էջ 42):

⁷ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:

⁸ Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1549, էջ 277 ր:

⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Առաքելյան. «Տիրամոր յոթ վերքը» կտավի հեղինակի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 5, էջ 92:

¹⁰ Իմիջիայլոց ճիշտ չէ Յու. Թարվերդյանի այն տեսակետը, որ իբր Լեհացու «մահվան թվականը որոշակիորեն հայտնի չէ», որ իբր «աղբյուրներից և ոչ մեկում այդ մասին տեղեկություն չկա» (նշված աշխ., էջ 15) և ըստ այդմ էլ՝ որպես Լեհացու մահվան հավանական թվական ընդունում է 1681 թ.: Իրականում մի շարք աղբյուրներում կան այդպիսի տեղեկություններ, բայց դրանք, ցավոք, անհայտ են Յու. Թարվերդյանին:

¹¹ Մենք լիովին համաձայն ենք Ա. Առաքելյանի այն եզրակացության հետ, որ ոչ մի հիմք չկա Լեհացուն «պրոֆեսիոնալ նկարիչ համարելու համար» (նշվ. աշխ., էջ 98), ուստի մինչև այժմ հայագիտական գրականության մեջ Լեհացին նկարիչ է դիտվել թյուրմտացարար Բացի Թարգմանական գործերից Ստեփանոս Լեհացին թողել է նաև փրիսոփայական բնույթի սեփական աշխատություններ, որոնց հիման վրա նա դիտվում է XVII դ. հայ փրիսոփայական մտքի խոշոր ներկայացուցիչներից մեկը: Լեհացու փրիսոփայական հայացքների վերլուծությունը տե՛ս В. Чалоян. О философии Степаноса Львовского. «Вопросы философии», 1958, № 9. Խոյնի Հայոց փրիսոփայության պատմություն, Եր., 1975, Յու. Թարվերդյան, Ստեփանոս Լեհացու փրիսոփայական հայացքները, Եր., 1979:

վարուցը», Կեղծ Դիոնիսիոս Արիոպագոցու հանրահայտ շորս աշխատությունն ու դրանց մեկնությունները, Արիստոտելի «Մետաֆիզիկան», «Ղուրանը» և այլն: Ներկա դեպքում կխոսենք միայն մեկի՝ Արիստոտելի աշխատության թարգմանության ու մեկնության մասին, որը հիրավի լուրջ ներդրում է հայ բազմադարյան թարգմանական գրականության հարուստ գանձարանը և մեծապես նպաստել է նոր շրջանի հայ փիլիսոփայության զարգացմանը:

Հանրահայտ է, որ մարքսիզմի դասականները տարբեր առիթներով անդրադառնալով Արիստոտելի տեսական ժառանգությանը, արտակարգ բարձր են գնահատել նրա «Մետաֆիզիկան»: Օրինակ, Վ. Ի. Լենինը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զբաղվելով «Մետաֆիզիկայի» մանրազնին ուսումնասիրությամբ, հիացմունքով է արտահայտվել նրա մասին: Հիշենք թեև Վ. Ի. Լենինի այն միտքը, որ «Արիստոտելի մոտ (ամենուրեք) օբյեկտիվ տրամաբանությունը խառնվում է սուբյեկտիվի հետ և ընդամին այնպես, որ ամենուրեք երևում է օբյեկտիվ տրամաբանությունը: Կասկած չկա ճանաչողության օբյեկտիվության նկատմամբ: Նախվ հավատ՝ բանականության ուժի, ճանաչողության ուժի, հզորության, օբյեկտիվ ճշմարիտության նկատմամբ»¹²:

Հայ մշակույթի, մասնավորապես փիլիսոփայական մտքի պատմության մեջ «Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանություն խաղացած դերը, նշանակությունն ու կարևորությունը հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում կատարել փիլիսոփայապատմական մի փոքրիկ էքսկուրս: Անտիկ փիլիսոփայության հսկայի այդ մեծարժեք երկը, ի տարբերություն նրա շատ այլ գործերի, արևմտաեվրոպական աշխարհում սկսել է լայն մասսայականություն ձեռք բերել միայն XII դարից և այն էլ՝ շնորհիվ արաբական փիլիսոփայության: XIII դ. ի հայտ են գալիս «Մետաֆիզիկայի» լատիներեն մի քանի անհարազատ թարգմանություններ: Բայց այդ վիճակում էլ այն արժանանում է տրամագծորեն հակադիր վերաբերմունքի: Բանն այն է, որ Ստագիրացու այդ երկը պարունակում էր խիստ հակասական գաղափարներ, ուստի նրանցից սկսում են տեսական սնունդ ստանալ թե՛ քրիստոնեական եկեղեցու տեսաբանները և թե՛ աղանդավորական շարժումների գաղափարախոսները: Զանգվածների գիտակցության վրա «Մետաֆիզիկայի» գործելիք ազդեցությունը թուլացնելու նպատակով կաթոլիկական եկեղեցին սկզբում արգելում է այն, բայց տեսնելով, որ այդ ճանապարհով հնարավոր չէ կասեցնել նրա տարածումը, որոշում է այն խմբագրել քրիստոնեական կրոնի վարդապետությանը նպատակահարմար ձևով: Այդ նպատակով XIII դ. առաջին տասնամյակներում ստեղծվում են ժամանակի ամենանշանավոր մտածողներից կազմված մի քանի հանձնաժողովներ, բայց դրանցից և ոչ մեկն այնպես էլ չկարողացավ լուծել առաջադրված դժվար խնդիրը: Բայց այն, ինչ չկարողացան անել այդ բազմամարդ հանձնաժողովները, մեն-մենակ կատարեց միջնադարյան սխոլաստիկայի ամենահսկա դեմքերից մեկը՝ Թոմաս Աքվինացին, որը մեծ վարպետությամբ արիստոտելյան ուսմունքից դուրս հանեց նրա կենդանի ոգին՝ այն վերածելով կաթոլիկական վարդապետությանը համահնչուն դոգմատիկական սխեմաների: Արիստոտելի «Մետաֆիզիկան» եվրոպական փիլիսոփայական հասարակությանն իր իսկական տեսքով ներկայացավ միայն XV դ.՝ շնորհիվ կարդինալ Վիսարիոնի լատիներեն խիստ ճշգրիտ թարգմանության: «Մետաֆիզիկան» առաջին անգամ տպագրվել է 1473 թ.՝ հունարեն և լատիներեն հան-

¹² Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 29, էջ 400:

դիպադիր տեքստերով: Հետագայում այն վերատպվել է բազմաթիվ անգամներ: Որքան էլ տարօրինակ է, եվրոպական ազգային լեզուներով «Մետաֆիզիկան», պատմական ինչ-ինչ պատճառներով, թարգմանվել ու տպագրվել է անհամեմատ ավելի ուշ. առաջինը տպագրվել է անգլերեն, երկրորդը՝ գերմաներեն, երրորդը՝ ֆրանսերեն, համապատասխանաբար՝ 1801, 1824 և 1840 թվականներին¹³:

«Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանությունն, ըստ էության, լատիներենից կատարված առայժմ հայտնի հնագույն թարգմանությունն է, իսկ հայերենը հունարենից, արաբերենից և լատիներենից հետո շորրորդ լեզուն է, որով արտահայտվել են նրանում արժարժված փիլիսոփայական մտքերը, ուստի այն կարիք ունի գիտական բազմակողմանի ուսումնասիրության: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ Ստեփանոս Լեհացին ոչ միայն թարգմանել է այն, այլև գրել համապատասխան մեկնություններ, որոնք մեծապես նպաստել են հայ իրականության մեջ անտիկ փիլիսոփայության հսկայի այդ դժվարամատչելի աշխատության խորիմաստ գաղափարների տարածմանն ու մասսայականացմանը: Ծիշտ է, մինչև XVII դ. ևս հայ իմաստասերներին որոշ չափով ծանոթ էին Արիստոտելի «Մետաֆիզիկայի» առանձին գաղափարներ, բայց ընդհանուր առմամբ Ստագիրացու այդ երկն անհայտ էր հայ ընթերցողին: Ըստ այդմ էլ դժվար է գերազնահատել Լեհացու թարգմանության ու մեկնության նշանակությունը XVII—XVIII դդ. հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Թե երբ է Լեհացին այն թարգմանել հայերենի, առայժմ դժվար է ստույգ թվագրել: Գիտենք միայն, որ «Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանության մեզ հասած ձևագրերից հնագույնն ընդօրինակվել է 1675 թ., որի հիշատակարանում տալում է. «Գծեցաւ ի թուիս հայոց՝ ՌՃԻԴ, ձեռամբ յոզնամեղ Գրիգորի Երևանցոյ»¹⁴: Այսպիսով, «Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանության հետին սահմանը 1675 թ. է, բայց մեր կարծիքով, լուրջ հիմքեր կան ասելու, որ Լեհացին այն թարգմանել է ավելի վաղ: Նման ենթադրություն տեղիք են տալիս «Մետաֆիզիկայի» լուսանքքներում Ստեփանոս Լեհացու ավելացրած մեկնությունները կամ, ինչպես ընդունված է ասել, «Լուծմունքը»: Մ. Մաշտոցի անվան մատենադարանի՝ Արիստոտելի «Մետաֆիզիկան» և Ստեփանոս Լեհացու «Լուծմունքը» պարունակող ինը ձեռագրերից երկուսն ընդօրինակված են XVII դ., իսկ մնացած յոթը՝ XVIII դ.:

Ցավոք, XVII դ. ձեռագրերը խիստ պակասավոր են և ոչ մեկը չունի «Մետաֆիզիկայի», հասկանալի է, նաև Լեհացու «Լուծմունքի» լրիվ տեքստը, բայց յնայած դրան, այդ ձեռագրերի համեմատությունը մեզ բերում է այն եզրակացության, որ Լեհացու մեկնությունները հաճախ էապես տարբերվում են իրարից, որը և հիմք է տալիս ասելու, որ հայ թարգմանիչն Արիստոտելի գլուխգործոց երկը մեկնել է երկու անգամ: Հնարավորություն չունենալով ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու դրանց մեջ մեր նկատած բոլոր տարբերությունները, կփորձենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել, մեր կարծիքով, առավել կարևորների վրա, որոնք հաղիվ թե լինեն գրչական փոփոխության արդյունք: Բանն այն է, որ այդ ձեռագրերից № 5249-ի (այսուհետև՝ Ա ձեռագիր և Ա խմբագրություն) գրության թվականն անհայտ է, իսկ

¹³ Այս տեղեկությունները վերցրել ենք հիմնականում «Философская энциклопедия» գրքի (т. 1, М. 1960) «Аристотель» հոդվածից:

¹⁴ Մատենադարան, ձեռ. № 10032, էջ 164 ր:

№ 10032-ը (այսուհետև՝ Բ ձեռագիր և Բ խմբագրություն) ընդօրինակվել է Թարգմանչի կենդանություն ժամանակ (1675 թ.) նրա աշակերտ ու մերձավորագույն բարեկամ Ներսես Բաբունու պատվերով: Իսկ հայտնի է, որ իբրև Լեհացուն մոտ կանգնած անձնավորություն՝ Ներսես Բաբունին հաճախ հնարավորություն է ունեցել Լեհացու ինքնագրերից ընդօրինակելու նրա Թարգմանած կամ հեղինակած այս կամ այն աշխատությունը¹⁵: Ամենայն հավանականությամբ այս անգամ ևս Ներսես Բաբունին իր տրամադրություն տակ ունեցել է Լեհացու բնօրինակը, որն ինչ-ինչ պատճառով չկարողանալով անձամբ ընդօրինակել, արտագրել է տվել Գրիգոր Երևանցուն:

Եթե ճիշտ է մեր այս ենթադրությունը, կարող ենք ասել, որ հանձին Բ օրինակի մենք գործ ունենք Լեհացու ինքնագրին գրեթե համարժեք ձեռագրի հետ: Սակայն, ցավոք, նրանից պակասում է ոչ միայն «Մետաֆիզիկայի» սկզբի մասը՝ ներառյալ մինչև V գրքի VII գլխի կեսը, այլև XI գրքի XII գլխի կեսից մինչև XII գրքի VIII գլխի սկիզբը, ինչպես նաև XIV գրքի վերջին (VI) գլուխը: Բայց եթե վերջինս կարող էր գալ նաև Լեհացու ձեռքի տակ եղած լատիներեն աղբյուրից, որովհետև ձեռագիրն ավարտվում է բնականոն ձևով¹⁶, ապա նույնը շենք կարող ասել նրանից պակասող մյուս հատվածների մասին:

Բանն այն է, որ ձեռագիրը մամլակալված է և սկսվում է «Ը» (VIII) մամուլից, իսկ «Ժէ» (XVII) մամուլին անմիջապես հաջորդում է «ԺԹ» (XIX) մամուլը: Դա նշանակում է, որ խնդրո առարկա ձեռագիրն սկզբնապես ունեցել է նաև այժմ պակասող մամուլները, որոնք ինչ-ինչ պատճառով կորել են հետագայում: Ավելի վատթար է Ա ձեռագրի պատկերը: Վերջինս խնամքով մամլակալված է մինչև 75 բ էջը, որից հետո այլ թանաքով ու այլ ձեռագրով նշված են մնացած մամուլները: Չնայած առաջին վեց մամուլներում (էջ 4ա—75բ) ոչ մի թերթ չի պակասում, բայց և այնպես պարզվում է, որ նրանցից բացակայում են «Մետաֆիզիկայի» I գրքի VIII—X և V գրքի VII, IX, XII, XXII, XXIX գլուխները, իսկ XXX գլուխը զետեղված է 90գ—90դ էջերում: Ընդ որում V գրքի XXVIII գլխին անմիջապես հաջորդում է XII գիրքը (էջ 76 ա—89 բ), որից հետո խառնափնթոր վիճակում շարադրված են VI և VII գրքերը: Փաստորեն Ա ձեռագիրը չունի նաև «Մետաֆիզիկայի» VIII—XI և XIII—XIV գրքերը: Հետագայում ինչ-որ մեկը Ա ձեռագրի երկրորդ մասում տիրող շփոթը կարգավորելու նպատակով ավելացրել է մի շարք ծանոթագրություններ, օրինակ՝ «ԺԵ թուղթ յառաջ գնա խաչ նշանն գիտ» (էջ 75 բ), «է թուղթ յառաջ գնա բուրբակ նշանն տե՛ս» (էջ 92 բ) և այլն: Հարկ է նշել նաև, որ Ա և Բ ձեռագրերից պակասող հատվածներն անթերի տեսքով կան Մատենադարանի № 3844 ձեռագրում, որը լինելով XVIII դ. ընդօրինակություն, խիստ հարազատ է Բ օրինակին:

Բացի բուն «Մետաֆիզիկայի» կառուցվածքային այս էական տարբերություններից, զգալի տարբերություններ են նկատվում նաև Լեհացու մեկնությունների միջև: Նպատակ չունենալով զբաղվելու դրանց մանրազնին ուսում-

¹⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Մատենադարանի № 110 (էջ 264 ա—269 ա) և № 606 (էջ 46 բ) ձեռագրերի՝ Ներսեսի ինքնագիր հիշատակարանները:

¹⁶ Նախ՝ 164 ր էջում Լեհացու վերջին մեկնությունն ավարտվում է «և այսքան բաւականացի ի փառս Աստուծոյ» ավանդական դարձվածով և երկրորդ՝ այդ նույն էջում կա նաև գրչի հիշատակարանը, որտեղ խնդրում է հիշել «զթարգմանել սորին և զլուծմանց յօրինող՝ Լեհցի Ստեփաննոս բանասէրն», ինչպես նաև հայտնում է, որ ինքը սույն ձեռագիրն ընդօրինակել է «ի վայելումն Բաբունայն Ներսէսի»:

նասիրությամբ, որովհետև դա կարող է մեզ շատ հեռացնել մեր հիմնական խնդրից, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել մեր նկատած առավել կարևոր փաստերի վրա:

1. Հաճախ Ա ձեռագրում իրարից անջատ, բայց տրամաբանորեն իրար հետ սերտորեն կապված դատողությունները Բ ձեռագրում միացվել ու դարձել են մեկ միասնական միտք: Օրինակ, Ա ձեռագրում «Մետաֆիզիկայի» V գրքի XIV գլխի առաջին իսկ տողերի լուսանցքում գրված է. «ԱՄ. Որակն չորս կերպիւ ասի, նախ տարբերութիւն գոյացութեան, ևրկրորդ որպէս յատկութիւնք թուոց այսինքն դար, կոճատ, սոյնպէս և այլն» (էջ 70 ա): Թեև լուսանցքում դեռ բավական տեղ է մնացել և ցանկության դեպքում կարելի էր շարունակել միտքը, բայց գրված է վերջակետ, իսկ հաջորդ էջում կարդում ենք. «ԱՄ. Տարբերութիւնք ձևոց. որզան, եռանկիւնի և այլ, երրորդ որակք կոչին ամենայն կիրք ըստ որս փոփոխին գոյացութիւնք զգալիք, չորրորդ տրամադրութիւնք և ունակութիւնք» (էջ 70 բ): Դժվար չէ տեսնել, որ թեև այս երկու հատվածները տրամաբանորեն կապված են իրար հետ, որովհետև երկուսում էլ խոսվում է «որակ» կատեգորիայի տեսակների մասին, բայց թե՛ մեկում և թե՛ մյուսում ինչ-որ բան մնում է անհասկանալի. առաջինում չի հասկացվում «սոյնպէս և այլն», իսկ երկրորդում՝ «տարբերութիւնք ձևոց. որզան, եռանկիւնի և այլ» հատվածը: Բայց այժա Բ ձեռագրում այդ երկու մտքերը միացվել են, որի շնորհիվ հասկանալի են դարձել թե մեկը և թե մյուսը. «Որակն՝ չորս կերպիւ ասի, նախ՝ տարբերութիւն գոյացութեան, երկրորդ՝ որ յատկութիւնք թուոց, այսինքն, դար և կոճատ և այլն: Սոյնպէս և տարբերութիւնք ձևոց, որզան եռանկիւնի, երրորդ՝ որակք կոչին ամենայն կիրք ըստ որոց փոփոխին գոյացութիւնք զգալիք, չորրորդ՝ տրամադրութիւնք և ունակութիւնք» (էջ 9 ա):

2. Ա ձեռագրում նկատվող առանձին խրթին ու դժվարամատչելի մտքեր Բ-ում ստացել են ավելի պարզ ու հստակ ձևակերպում: Օրինակ, Ա-ի «Բարին և շարն յիրս և ճշմարիտն ի միտս» (էջ 98 ա) և «Եթե այն ոչ է ներգործութեամբ նմա ոչ հետևի շարժութիւն զի տակաւին ոչ էակ է» (էջ 102 բ) դատողությունները Բ ձեռագրում համապատասխանաբար ունեն հետևյալ տեսքը՝ «Բարին և շարն՝ են յիրս, իսկ ճշմարիտն և սուտն ի միտս» (էջ 27 բ) և «Եթէ այն՝ որ ոչ է ներգործութեամբ, անկարելի է եղանիլ, ուրեմն բարձցի ամենայն շարժութիւն և լինելութիւն» (էջ 70 բ):

3. Կան դեպքեր, երբ Ա-ի այս կամ այն միտքը Բ-ում ասված է ավելի կարճ, բայց առանց բովանդակության որևէ կորստի: Օրինակ, «ոմանք ըստ շարժութեան ասին և ոմանք ըստ վախճանի, յորժամ տակաւին իր ոչ կատարի ընշարժութեան է, իսկ յորժամ զվախճան առնուցու ասի գոլ ներգործութեամբ» (էջ 105 ա) միտքը Բ-ում չունի վերջին «իսկ յորժամ զվախճան առնուցու ասի գոլ ներգործութեամբ» հատվածը¹⁷: Ըստ երևույթին մեկնիչն զգալով, որ դա հասկացվում է նաև նախորդ հատվածից, իրրև ավելորդ կրկնաբանություն, հարկ է համարել դուրս թողնել:

4. Մտանդարանում պահվող վերջ նշված ինը ձեռագրերից երեքում (№ 3005, 3355, 5249), որոնք պատկանում են Ա խմբագրության, «Մետաֆիզիկայի» V գրքին անմիջապես հաջորդում է VI գիրքը, մինչդեռ մնացած վեցում (№ 926, 2049, 2050, 3844, 4027, 10032) V գրքից հետո թարգմանիչ ու մեկնիչ չեն հասցրել է. «Բացայայտութիւն ի վեցերորդ գիրս Մէթաֆի-

¹⁷ Տե՛ս Մտանդարան, ձեռ. № 10032, էջ 74 ա:

զիկային» վերնագրով հետևյալ հատվածը. «ԳՆտուրին իմացական, որ է՝ տեսական իմաստասիրութիւն, յերիս տեսակս բուժանի, այսինքն, ի բնաբանական, յուսումնական և յաստուածաբանական, և այսոքիկ ամենեքեան զսկզբբունս և զպատճառս ենթակային իւրեանց նկատեն, և այսու համաձայնին: Բայց տարածային այնու, զի բնաբանականն ենթակայ ունի զսեռ իմն էակի, որ է շարժուն ըստ նիւթոյ, և ըստ տեսակի, և է [ան]անջատելի* ի նիւթոյ ըստ գոլոյն և ըստ բանի, իսկ ուսումնականին ենթակայն է բացորոշեալ սեռ իմն էակի, որ թէպէտ ըստ գոլոյնն է [ան]անջատելի** ի նիւթոյ, այլ ոչ ըստ բանի: Զորօրինակ ձև եռանկիւնի, կամ գիծ ուղիղ, թէպէտ ո՛չ լինի արտաքոյ նիւթոյ, սակայն առանց նիւթոյ կարես զնոսա ըմբռնել և սահմանել: Իսկ մեթաֆիզիկային ենթակայն է՝ էակ, ըստ որում էակ, այսինքն, ընդհանուր և հասարակ և ոչ բացորոշեալ, իբր թէ այս կամ այն, և է անջատելի ի նիւթոյ, ըստ գոլոյն և ըստ բանի և քննէ զսկզբունս առաջինս և զպատճառս ընդհանրականս: Ուստի և նախկին իմաստասիրութիւն կոչի և աստուածաբանական, զի զպատուականագոյն էակն՝ որ է աստուածային, քննէ»¹⁸:

Կարելի է բերել մի շարք այլ փաստեր ևս, բայց կարծում ենք, այսքանն էլ բավական է համոզվելու, որ, իսկապես, մենք գործ ունենք հայ մեկնիչի միևնույն աշխատանքի երկու տարբերակի հետ, որոնցից Ա-ն նախնականն է, իսկ Բ-ն՝ նրա հեղինակային¹⁹ երկրորդ խմբագրութունը, որը թե՛ ձևով և թե՛ բովանդակութեամբ ավելի կատարյալ է, ուստի ճիշտ կլինի այսուհետև Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները վերլուծելիս օգտվել միայն Բ խմբագրութունից, որն ավելի տարածված է եղել, քան Ա-ն: Ասենք նաև, որ Լեհացու «Լուծմունքը» ըստ կառուցվածքի նույնպես բաժանվում է երկու խմբի՝ ձեռագրերի մի մասում այն շարադրված է «Մետաֆիզիկայի» լուսանցքներում, իսկ մյուս մասում այն հանդիպում է որպես ինքնուրույն աշխատութուն: Օրինակ, Մատենադարանի № 2050 ձեռագրում այն հաջորդում է «Մետաֆիզիկային» և ունի «Լուծմունք» գրոցն Մեթաֆիզիզոց Արիստոտելի Ստագրացոց շարադրեցեալ ի Ստեփաննոսէ վարդապետէ Լեհացոց որ ևս է թարգմանիչ նոյնոյ գրքոյն» (էջ 199 ա—240 ա): Թեև Լեհացու մտքերը դասավորված են ըստ «Մետաֆիզիկայի» գրքերի ու գլուխների, բայց ընթերցողի գործն ավելի հեշտացնելու նպատակով թե «Մետաֆիզիկայի» համապատասխան մտքի և թե Լեհացու մեկնութեան լուսանցքում գրիչը նշանակել է հայկական այբուբենի նույն տառը: Գրեթե նույնն ենք տեսնում նաև № 4027 ձեռագրում:

Եթե զնահատելու լինենք Լեհացու «Լուծմունքն» ըստ էութեան, ապա պետք է ասել, որ մեկնիչ-Լեհացին շարունակել է թարգմանիչ-Լեհացու գործը՝ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում ջանացել է հայ ընթերցողին հասցնել հունական փիլիսոփայութեան այդ իսկական գանձարանի գաղափարները: Ըստ այդմ էլ՝ Լեհացին հաճախ պարզապես վերարտադրում է Արիստոտելի մտքերը, միայն թե՛ ավելի համառոտ, պարզ ու դյուրամատչելի ձևով: Բայց եթե, որպես թարգմանիչ, Լեհացին, բնականաբար, չէր կարող իրեն ազատ զգալ, ապա, իբրև մեկնիչ, նա իրավունք ուներ մեկնելու այն տեղերը, որ ինքն էր ցանկանում,

* } Գրիչը սխալմամբ երկու անգամ էլ գրել է «անջատելի», ուղղել ենք ըստ Մ Մ 2049, 3844
 ** } և 4027 ձեռագրերի:

¹⁸ Նույն տեղում, էջ 21 ա—բ:

¹⁹ Մենք դա վերագրում ենք հեղինակին, որովհետև հաշվի առնելով Ստեփանոս Լեհացու հանդեպ ժամանակակիցների տածած բացառիկ հարգանքն ու ակնածանքը, հազիվ թե որե՛ն մեկը համարձակվեր նրա կենդանութեան ժամանակ էապես խմբագրել նրա աշխատութունը:

ընդամին այնպես, ինչպես հարմար էր դատում: Ուստի հաճախ նա ոչ միայն նույնությամբ կրկնում ու վերաշարադրում է Արխատտելի համապատասխան մտքերը, այլև պարզաբանում է դրանցում մութ մնացած տեղերը, լրացնում թերիները, հասկանալի է, ավելացնելով նաև սեփական ըմբռնումներն ու պատկերացումները: Բնական է, որ Լեհացու փիլիսոփայական հայացքները գնահատելու իմաստով առանձնապես կարևոր են վերջին կարգի մեկնությունները, բայց երբեմն իմացական արժեքից զուրկ չեն նաև առաջինները: Բանն այն է, որ XVII դ., երբ արևմտաեվրոպական իրականության մեջ միջնադարյան սխոլաստիկայի դեմ մղվող պայքարում հանիրավի կերպով մասամբ քումահարվում էր Արխատտելի ժառանգությունը, համաշխարհային փիլիսոփայության այդ առաջնակարգ հսկայի առաջավոր, մատերիալիստական ուղղվածությունն ունեցող գաղափարների նշմարումը, վերարծարծումն ու մասսայականացումն ստանում էին պատմական բացառիկ կարևոր նշանակություն: Էլ չենք ասում, որ այդ գաղափարներից շատերն այժմ էլ չեն կորցրել իրենց իմացական արժեքը: Բազմաթիվ փաստերից բերենք միայն մեկը. մեկնելով «Մետաֆիզիկայի» XIII գրքի առաջին գլուխը, Լեհացին պարզ ու որոշակի գրում է. «Ուսումնական էակք թեպէտ են ի զգալիս, և ոչ են անջատեալք ի նիւթոյ ըստ գոլոյն, սակայն ըստ բանի են անջատեալք ի նիւթոյ, զոր օրինակ՝ գիծ, կամ եռանկիւնին թէպէտ ոչ լինին առանց նիւթոյ, սակայն կարես զնոսա ըմբռնել աննիւթաբար»²⁰: Ավելորդ չէ ասել, որ մաթեմատիկայի ուսումնասիրության օբյեկտների մասին արխատտելյան այս տեսակետը, ներկայումս էլ, ըստ էության, հիմնական գծերով մնում է ուժի մեջ: Բավական է հիշել թեկուզ այն փաստը, որ մեր գարասկզբին վերլուծելով մաթեմատիկական վերացարկումների հետևանքով մարդկային մտքի առջև ծառայող դժվարությունները, Վ. Ի. Լենինը նշել է, որ Արխատտելը «Մետաֆիզիկայի» XIII գրքի III գլխում դրանք լուծում է «հրաշալի, հստակ, պարզ կերպով, մատերիալիստորեն (մաթեմատիկական և մյուս գիտությունները վերացարկում են մարմնի, երևույթի, կյանքի կողմերից մեկը)»²¹:

Այսօր դժվար, գրեթե անհնար է գնահատել նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում Արխատտելի «Մետաֆիզիկայի» հայտերն թարգմանության ու Ստեփանոս Լեհացու «Լուծմունքի» խաղացած դերը: Դա մոտավոր իսկ շափով հասկանալու համար հարկավոր է լավ իմանալ ընդհանրապես համաշխարհային փիլիսոփայության պատմության մեջ այդ հիրավի հանրագիտարանային գրքի ունեցած տեղն ու խաղացած դերը: Հարկավ՝ տարբեր ժամանակներում այն գնահատվել է տարբեր ձևով՝ կախված գրեհահատողի հավատամքից ու համաշխարհային փիլիսոփայության զարգացման պատմական ընթացքի իմացության աստիճանից: Ուստի իրարամերժ տեսակետների լարբիրնթոսում շխարխափելու համար հարկ ենք համարում բերել միայն ամենավերջին գնահատականներից մեկը: Ըստ ամենայնի արժեքավորելով Արխատտելի «Անծ գրքի» դրականն ու բացասականը, սովետական ականավոր գիտնական Վ. Ֆ. Ամաուր եզրակացնում է. «Եվ այնուամենայնիվ այդ գիրքը զարմանալի ու անկրկնելի է: Ապշեցնում են հարցերի ընդգրկման լրիվությունն ու լայնությունը, ձևակերպման վարպետությունն ու ճշգրտությունը: Այդ գրքով դարեր շարունակ փիլիսոփայություն են ուսանել Արևելքի

²⁰ Մատենադարան, ձեռ. № 10082, էջ 127 ր:

²¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 29, էջ 405:

ու Եվրոպայի ժողովուրդները: Ով ուսումնասիրել է այդ գիրքը, նա ուսումնասիրել է բուն փիլիսոփայությունը, մտել նրա խորքերը, պայքարել նրա դժվարությունների ու հակասությունների դեմ, բարձրացել դեպի նրա բարձունքները, տառապել նրա սահմանափակությամբ: Արիստոտելը մարդկության իսկական ուսուցիչն է»²²: Մեզ մնում է ասել, որ եթե Արիստոտելը մարդկության իսկական ուսուցիչն է, ապա Ստեփանոս Լեհացին մեկն է նրա այն տաղանդավոր աշակերտներից, ովքեր տարբեր դարերում ու տարբեր երկրներում ուժերի գերագույն լարումով կարողացել են մշտապես անմար պահել իրենց մեծ ուսուցչի վառած փիլիսոփայական լուսատու շահը:

Г. К. МИРЗОЯН — К вопросу об армянском переводе и толковании «Метафизики» Аристотеля. — На основе сравнительного изучения содержащих армянский перевод и толкование «Метафизики» Аристотеля всех девяти рукописей Матенадарана имени М. Маштоца устанавливается, что армянский перевод сделан видным философом Степаносом Лехацци в конце 60-х—начале 70-х годов XVII века и является самым ранним после латинского перевода. Далее выясняется, что толкование Лехацци «великой книги» Аристотеля, написанное им параллельно с переводом, дошло до нас в двух вариантах. По мнению автора, отныне при характеристике философских взглядов Лехацци следует учитывать то обстоятельство, что из этих двух толкований совершеннее вариант «В». Толкование Лехацци «Метафизики» Аристотеля ценно особенно тем, что в то время, когда западноевропейская философия XVII века в борьбе против схоластики зачастую сводила на нет передовую материалистическую тенденцию теоретического наследия великого философа, армянский толкователь не только раскрыл и объяснил положения его гениального труда, но и развил «живой дух» его философии.

²² Аристотель, Сочинения, в четырех томах, т. I, М., 1976, с. 49—50.